ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ» ԼՐԱՑՎՈՂ ՀԵԴՎԱԾՆԵՐԸ

Հոդված 14. Պաշտոնատար անձանց պատասխանատվությունը

Պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

Հոդված 14[1] Վարչական տույժ նշանակող մարմնի (պաշտոնատար անձի) (այսուհետ՝ մարմնի (պաշտոնատար անձի)) պատասխանատվությունը

Վարչական պատասխանատվության ենթակա են այն մարմինը (պաշտոնատար անձը), ով ոչ իրավաչափ վարչարարությամբ վնաս է հասցրել անձի կամ անձանց:

Մարմնի (պաշտոնատար անձի) ոչ իրավաչափ վարչարարությունը ենթակա է պատասխանատվության սույն օրենսգրքի 53[2] հոդվածով:

Հոդված 53[1]. Ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին հանցագործությամբ պատճառած գույքային վնասի հատուցումից խուսափելը

(53[1] - րդ հոդվածն ընդունված է 25.06.86, խմբ. 02.09.93 ՀՕ-79, ուժը կորցրել է 16.12.05 ՀՕ-32-Ն)

Հոդված 53[2] Մարմնի (պաշտոնատար անձի) ոչ իրավաչափ վարչարարությունը:

Մարմնի (պաշտոնատար անձի) ոչ իրավաչափ վարչարարությունը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:

Մարմնի (պաշտոնատար անձի) ոչ իրավաչափ վարչարարությունը՝ վարչական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Մարմնի (պաշտոնատար անձի) ոչ իրավաչափ վարչարարությունը՝ վարչական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում, երրորդ և ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետությունը իրավունք ունի ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի համաձայն վնասի հատուցման հետադարձ պահանջ ներկայացնել ոչ իրավաչափ վարչարարություն իրականացրած մարմնին (պաշտոնատար անձին):